Նորին Ամենապատուութիւն

# Ամ. Սահակ Բ.

Պատրիարք Հայոց Կ.Պոլսոյ

Անդրանիկ Այցելութիւն
Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ԱՄՆ Արեւմտեան Թեմ




The Historic Visit of His Beatitude

# Sahak II

Armenian Patriarch of Constantinople
To The Western Diocese of the Armenian Church

June 16, 2025 - June 23, 2025

Օրհնութեամբ եւ Բարձր Հովանաւորութեամբ
Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ
Հիւսիսային Ամերիկային Արեւմտեան Թեմի
Բարեխնամ Առաջնորդ
ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ Ս. ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ
Պըրպէնք – Գալիֆորնիա
22 Յունիս 2025

Under The Auspices of
His Eminence
Archbishop HOVNAN DERDERIAN
Western Diocese Of The Armenian Church Of
North America
Burbank – California
June 22, 2025



Պոլսոյ Հայոց Պատրիարքարան
Armenian Patriarchate Of Constantinople



Ն.Ա.Տ. Սահակ Բ Պատրիարք Հայոց Կ.Պոլսոյ
His Beatitude  Sahak II Armenian Patriarch of Constantinople

# ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
# Ն.Ա.Տ. ՍԱՀԱԿ Բ. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ

Աւազանի անունով Շահին (Մաշալը), ծնած է 17 Մարտ 1962ին, Պայրամփաշա (Ստանպուլ)։ Որդին է Յակոբճանի եւ Արմինէ Էօզտէմիրի։ Կը մկրտուի Կէտիկփաշայի Ս. Յովհաննէս Աւետարանիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Դաւիթ Աւ. Քհնյ. Երէցեանի, 15 Դեկտեմբեր 1969ին։

Կ՚ուսանի Գումգաբըի Թեվֆիք Քութ Նախակրթարանի, Կետիկփաշայի Պետական Միջնակարգ վարժարանի եւ Պաքըրգիւղի պետական լիսէին մէջ։ 1979ին մուտք կը գործէ Ստանպուլի Թէքնիք Համալսարանի Ելեկտրական Ճարտարագիտութեան եւ Հաղորդակցական Ճարտարագիտութեան Բաժինը։

1982ին որոշելով հոգեւորական դառնալ, կը թողէ համալսարանը եւ 20 տարեկանին կը սկսի Հայերէն սորվիլ։ Ստանպուլ Համալսարանի Գրականութեան ֆաքիւլթէի Իմաստասիրութեան Բաժնի ուսանողութեան շրջանին (1983-1987), Շնորհք Պատրիարք զինք կ՚ընդունի որպէս տիրացու։ Համալսարանի ուսման կողքին, մասնաւոր դասեր կ՚առնէ Հայ լեզուի, ծիսագիտութեան, Եկեղեցւոյ Պատմութեան եւ Վարդապետութեան մասին եւ այսպէս կը սկսի պատրաստուիլ հոգեւորականութեան։

1981ի աշնան կը փափաքի աւելի մօտէն ճանչնալ Հայ Եկեղեցին եւ այս առումով կը հետեւի քարոզութեանց։

Զինուորական պարտականութիւնը կը կատարէ Քեաղըթհանէի (Ստանպուլ) եւ Թաթվանի (Պիթլիս) մէջ, 1988-1989 շրջանին։

Դպրութեան չորս աստիճանները կը ստանայ 30 Հոկտեմբեր 1983ին, Շնորհք Պատրիարքէ, Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ, Ռոյ Քիւչիւքաթէշի հետ։ Ուրար կրելու արտօնութիւնը կը ստանայ 24 Հոկտեմբեր 1985ին, Սկիւտարի Ս. Կարապետ Եկեղեցւոյ մէջ, Նորայր Տաղլարեանի եւ Ռոպէր Քիւչիւքաքպուլութի հետ, իսկ սարկաւագ կը ձեռնադրուի 3 Օգոստոս 1986ին, Գնալը Կղզիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, Շնորհք Պատրիարքի ձեռամբ, Նորայր Տաղլարեանի եւ Ռոպէր Քիւչիւքաքպուլութի հետ։

Պագըրգիւղի Ծնունդ Սուրբ Աստուածածնի Եկեղեցւոյ մէջ 1984-1988 շրջանին Պատրիարքական Աթոռոյ տնօրինութեամբ կը շարունակէ Մեսրոպ Վրդ. Մութաֆեանի ձեռնարկած ոչ-հայախօս տիկնանց ուղղեալ քարոզները։ Պատրիարքարանի մէջ պաշտօն կը ստանձնէ որպէս երախայից դաստիարակ։ 1986-1988 շրջանին կը վարէ Գնալը Կղզիի Ներսէսեան Դպրաց Դասու Տնօրէն Խորհուրդի ատենապետութիւնը։ Նոյն շրջանին կը ստանձնէ նաեւ Կէտիկփաշայի Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ մէջ քարոզելու պաշտօնը։

1989էն սկսեալ Աստուածաբանութիւն կ՚ուսանի Լոնտոնի Էլլըն Հոլ (Allen Hall) Գոլէճին մէջ, ուր կը հետեւի Պելճիոյ Լէօյֆըն (Leuven) Համալսարանի ծրագիրներուն։ 1994ին ընթացաւարտ կ՚ըլլայ տեղ գրաւելով պատուոյ ցուցակին մէջ, “Magna Cum Laude” (Բարձր Պատուոյ) աստիճանով։

Անգլիոյ ուսման շրջանին, 9 Յուլիս 1992ին, Գարեգին Բ. Պատրիարքի ձեռամբ կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի, Պէյօղլուի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ, վերակոչուելով «Սահակ Աբեղայ»։

Ուսման համար կը մեկնի Տապլին` Իրլանտա (24 Սեպտեմբեր 1992)։ Վանական կեանքը ճանչնալու համար, 1994ի ամրան վերջաւորութեան կը մեկնի Երուսաղէմ, ուր կը մնայ 1994-1997 շրջանին։ Երուսաղէմի Թորգոմ Բ. Պատրիարքի (Մանուկեան) խրախոյսով, երեք տարի ժողովուրդին ուղղեալ Սուրբ Գիրքի սերտողութեան դասերը։ Կը ստանձնէ նաեւ Թարգմանչաց Վարժարանի տեսչութեան եւ կրօնի ուսուցչութեան պաշտօնները։

Մագիստրոսութեան աշխատանք կը տանի Տալլինի մէջ, Յիսուսեաններու Milltown Institute of Philosophy and Theologyի մօտ Հոգեւորութեան (Spirituality) ճիւղին մէջ (1997-1999), աւարտելով՝ «Հաւատքի եւ Բժշկութեան Հրաշքներ» գիտաշխատութիւնը (2000):

Գնալը Կոզիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Գումգաբու Դրսի Ս. Յարութիւն, Կէտիկփաշայի Ս. Յովհաննէս եւ Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներուն մէջ կը ծառայէ որպէս հոգեւոր հովիւ եւ քարոզիչ (1999-2005): Նոյն շրջանին փոխ-ատենապետն է Կրօնական Ժողովի: Կը մասնակցի երկրէ ներս ու դուրս ժողովներու եւ բանախօսութիւններու, ներկայացնելով Պատրիարքական Աթոռը: Պատրիարքական Աթոռոյ պաշտօնաթերթ՝ «Լրաբեր»ի մէջ լոյս կը տեսնեն իր գրութիւնները:

Կը մեկնի Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ կը ստանձնէ Սեւանի Վազգէնեան, ապա Գէորգեան ճեմարաններու տեսչութեան պաշտօնները: Կը վարէ Գէորգեան Աստուածաբանական Ճեմարանի դասախօսութեան, փոխ-տեսչութեան (2005-2011), երեք տարի ալ տեսչութեան պաշտօնները, նպաստելով աւելի քան 200 հոգեւորականի պատրաստութեան:

Դասախօսութեան եւ վարչական պաշտօններու կողքին, կը շարունակէ ծառայել որպէս քարոզիչ եւ հոգեւոր խորհրդական:

Կը պաշտպանէ «Հաւատք եւ հրաշք» աւարտաճառը եւ վարդապետական գաւազանի իշխանութիւն կը ստանայ 22 Ապրիլ 2006ին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Շահան Արքեպս. Սվաճեանի:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ եպիսկոպոս կ՚օծուի, ձեռամբ Գարեգին Բ. Կաթողիկոսի (24 Օգոստոս 2008):

Շողակաթ TV-ի մէջ 2008-2010 շրջանին կը կատարէ «Աւետարանի Ուսուցում» խորագրեալ հաղորդումներ, թիւով 72, որոնք եթերուած են Հայաստանի եւ սփիւռքի մէջ:

Կը վերադառնայ Ստանպուլ (2011) եւ կը դառնայ Պատրիարքական Աթոռոյս Միջեկեղեցական եւ Միջկրօնական Յարաբերութեանց Պատասխանատուն (2013): Այս առումով, գործօն դեր կը ստանձնէ Թուրքիոյ Եկեղեցիներու Հասարակաց Յանձնախումբի մէջ: Այս յանձնաժողովը, եկեղեցւոյ ողջ պատմութեան մէջ առաջին անգամ, Կաթողիկէ, Ուղղափառ եւ Բողոքական դաւանանքներու հասարակաց հաւատքը կ՚ամփոփէ հատորի մը մէջ: Յանձնաժողովի հետ միասին գրի կ՚առնէ «Հիմնական սկզբունքներով Քրիստոնէութիւն» անուն հատոր մը, որ կը թարգմանուի անգլերէնի:

Ս. Եկեղեցեաց քարոզչութեան առընթեր, կը պաշտօնավարէ Սահակեան-Նունեան Լիսէի մէջ, որպէս կրօնքի ուսուցիչ:

Մեսրոպ Բ. Պատրիարք Հօր վախճանումէն ետք, Եկեղեցականաց Համագումար Ժողովի 4 Յուլիս 2019ի նիստին կ՚ընտրուի Պատրիարքական Տեղապահ:

Պատգամաւորական Ժողովի 11 Դեկտեմբեր 2019ի նիստին կ՚ընտրուի 85րդ Պատրիարք Հայոց Թուրքիոյ: Կը գահակալէ 11 Յունուար 2020-ին: Նոյն օր, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի կոնդակով կը ստանայ Արքութեան պատիւ:

Թրքերէնի եւ Հայերէնի կողքին, քաջահմուտ է Անգլերէնի: Սերտած է նաեւ Հին Յունարէն, Լատիներէն եւ Եբրայերէն:

Գրի կ՚առնէ Յովհաննէս Կոլոտ եւ Գրիգոր Շղթայակիր պատրիարքներու կեանքերուն վրայ հիմնուած «Երկու Ուխտաւոր» կրօնապատմական վէպը, որ քանիցս տպուած է եւ ընդունուած՝ որպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ամենասիրուած եւ ամենայաջող հրատարակութիւնը:

# His Beatitude Sahak II Partriarch Of Constantinople
# *Biography*

His Beatitude Archbishop Sahak Mashalian (baptismal name Shahan) was born in 1962, in Istanbul.In 1983, he began to serve in the Armenian Patriarchate of Constantinople.

From 1983 to 1987, he studied at the Department of Philosophy of Istanbul University.

In 1986, he was ordained to the diaconate by His Beatitude Archbishop Shenork Kaloustian, Armenian Patriarch of Constantinople.

From 1989 to 1994, he studied at the University of London.

In 1992, he was ordained as a celibate priest by His Beatitude Archbishop Karekin Kazanjian, Armenian Patriarch of Constantinople.

From 1994 to 1997, he served as the Dean of the Holy Translators Seminary of the Armenian Patriarchate of Jerusalem.

From 1997 to 1999, he continued his advanced education at the University of Dublin, Ireland.

From 1999 to 2005, he was the Head of the Inter-church and Inter-religious Relations Department of the Armenian Patriarchate of Constantinople. He also served as a spiritual pastor in the Armenian churches of Constaninople.

In 2005, he lecturered "Introduction and Interpretation of the New Testament" at the Gevorkian Theological Seminary at the Mother See of Holy Etchmiadzin and the Vaskenian Theological Academy.

On Apri 21, 2006, in the Mother See, he defended his doctoral thesis entitled "Belief and Miracle", and received the rank of Archimandrite (Vardapet) by Archbishop Shahan Svajian, in the St. Mesrop Church of Oshakan.

From 2007 to 2010, he served as the Dean of the Gevorkian Theological Seminary.

In 2008, Father Sahak was consecrated as a Bishop by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, in the Mother See of Holy Etchmiadzin.

In 2011, he was appointed to serve as the Chairman of the Inter-Church and Inter-Religious Relations Department of the Armenian Patriarchate of Constantinople.

On July 4, 2019, His Grace Bishop Sahak Mashalian, the Chairman of the Religious Council of the Armenian Patriarchate of Constantinople; was elected to serve as a patriarchal Locum Tenens at the meeting being held in the Armenian Patriarchate of Constantinople.

On December 11, 2019, the National Parliamentary Assembly elected His Grace Bishop Sahak Mashalian as the 85th Armenian Patriarch of Constantinople.

On January 11, 2020, the Enthronement ceremony of the 85th Armenian Patriarch of Constantinople His Grace Bishop Sahak Mashalian was offered in the Holy Mother of God Cathedral of the Armenian Patriarchate of Constantinople.

On the same day, His Beatitude was elevated to the rank of Archbishop by the Pontifical Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians; in appreciation of his diligent service.



Ն.Ա.Տ. Սահակ Բ Պատրիարք Հայոց Կ.Պոլսոյ
His Beatitude  Sahak II Armenian Patriarch of Constantinople


WESTERN
DIOCESE
ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA
1927



Գերշ. Տ. Յովնան Ս. Արք. Տէրտէրեան
His Eminence Archbishop Hovnan Derderian

WESTERN DIOCESE OF
THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA
HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE

# ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
# ՏԷՐ ՍԱՀԱԿ Բ. ՄԱՇԱԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ
# ՇՆՈՐՀԱԲԱՇԽ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

Յանուն Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի հոգեւորականաց դասուն, Թեմական Խորհուրդին ու ժողովուրդի զաւակներուն, քրիստոնէական ջերմ սիրով ու հայկական վառ ապրումներով կ՛ողջունենք Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Տէր Սահակ Բ. Արքեպիսկոպոս Մաշալեանի պատմական ու օրհնաբեր այցելութիւնը Արեւմտեան Թեմ:

Բոլորիս ծանօթ է, որ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը իր բոլոր նուաճումներով ու ամուր աւանդներով եղաւ եւ այսօր ալ կը շարունակէ մնալ հայ կեանքի նշանաւոր կեդրոններէն մէկը, որու հոգեւոր խնամքին յանձնուած հաւատաւոր ժողովուրդը, մեր նախնեաց օրինակով անխախտ է պահած ազգային ու հոգեւոր մեր կեանքի նուիրական արժէքները, յանձնառու մնալով Պատրիարքարանի հովանու տակ գործող եկեղեցիներու ու ազգային հաստատութեանց պայծառութեան նուիրական առաքելութեան:

Արդարեւ, Հայ Եկեղեցւոյ առաքելութեան ճանապարհին նշանակալի հանգրուան եղաւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքութեան հիմնադրումը 1461 թուականին, որով սկիզբ առաւ Թուրքիոյ հայութեան ազգային ու եկեղեցական կեանքի նոր վերազարթօնքը: Հազարաւոր մեր եկեղեցիներն ու վանքերը, պատմամշակութային բազմահազար յուշարձան-կոթողները, ձեռագիր ու տպագիր գիրքերը, արուեստի եւ գիտութեան ձեռքբերումները խօսուն վկաներն են Պատրիարքութեան հարուստ վաստակին ու ժառանգութեան: Յիրաւի, շնորհիւ նուիրեալ եկեղեցականներու ու բազմաթիւ վաստակեալ ազգայիններու ու մշակութային գործիչներու ամբողջանուէր ծառայութեան, երկար դարերու վրայ տարածուած Պատրիարքութեան հոգեւոր իշխանութեան ներքոյ վերածնուեցան հնագոյն մեր վանքերը, հաստատուեցան ազգային, հոգեւոր ու մշակութային սքանչելի կեդրոնները, որոնք այսօր ալ կը շարունակեն հարստացնել եկեղեցական եւ մշակութային կեանքը հաւատաւոր ու բարեպաշտ պոլսահայութեան, որոնք ջերմ սիրով կապուած են Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Հայրենիքին ու հայրենական մեր սրբութիւններուն:

Բարձրեալի օրհնութեան ներքոյ եւ Արեւմտեան Թեմի հրաւէրով Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Տէր Սահակ Բ. Արքեպիսկոպոս Մաշալեանի օրհնաբեր այցելութիւնը հոգեւոր նորոգութեան ամրապնդման հրաւէր է մեր հաւատացեալներուն, անսասան մնալու առ Աստուած հաւատքի ու յոյսի մէջ, եւ մեր կեանքերը հարստացնելու նոր ու աստուածահաճոյ գործերու արգասիքներով:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Ամենաբարին Աստուած հաստատուն ու պայծառ պահէ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը, քաջառողջութիւն պարգեւէ Անոր Գահակալին, նուիրեալ միաբանութեան ու բարեպաշտ ողջ ժողովրդին՝ առաւել ծաղկեցնելու մեր Եկեղեցւոյ օրհնեալ անդաստանը՝ ի փառս մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, Հայ Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի:

Յանուն Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի հոգեւորականաց դասուն, Թեմական Խորհուրդին ու ժողովուրդի զաւակներուն, դարձեալ կ՛ողջունենք Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Տէր Սահակ Բ. Արքեպիսկոպոս Մաշալեանի պատմական ու օրհնաբեր այցելութիւն Արեւմտեան Թեմ: Վստահ ենք, որ Նորին Ամենապատուութեան շնորհաբաշխ ներկայութեամբ ու աղօթքով պիտի շարունակենք մեր հաւաքական երթը՝ ի խնդիր քրիստոնէական հաւատքի ամրապնդման ու մեր հոգեմտաւոր արժէքներու պահպանութեան:

Օրհնութեամբ՝

Յովնան Արք. Տէրտէրեան
Առաջնորդ ԱՄՆ Արեւմտեան Թեմի
22 Յունիս 2025

WESTERN DIOCESE OF
THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA

HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE

## THE HISTORIC VISIT OF HIS BEATITUDE SAHAK II ARMENIAN PATRIARCH OF CONSTANTINOPLE TO THE WESTERN DIOCESE

On behalf of the clergy of the Western Diocese of the Armenian Church of North America, the Diocesan Council, and the faithful, we warmly welcome with a Christian love and a vibrant Armenian spirit the historic and blessed visit of His Beatitude Sahak II, the Armenian Patriarch of Constantinople, to the Western Diocese.

It is well known that the Armenian Patriarchate of Constantinople, with its rich legacy and steadfast traditions, has been—and continues to be—one of the most significant centers of Armenian life. Entrusted to its spiritual care, the faithful have preserved the revered values of our national and spiritual life, remaining committed to the sacred mission of the churches and national institutions operating under the auspices of the Patriarchate.

Indeed, the founding of the Armenian Patriarchate of Constantinople in 1461 was a major milestone in the mission of the Armenian Church, marking the beginning of a new spiritual and national awakening for the Armenians of Constantinople. Thousands of churches and monasteries, countless cultural monuments, handwritten and printed books, and achievements in art and science are testaments to the Patriarchate's rich heritage and legacy. Thanks to the devoted service of dedicated clergy and numerous distinguished national and cultural figures, many ancient monasteries were revived, and national, spiritual, and cultural centers were established, which to this day continue to enrich the ecclesiastical and cultural life of the faithful Armenians of Constantinople. Furthermore, their deep connection with the Armenian Holy Apostolic Church, the Mother See of Holy Etchmiadzin, our Homeland, and its sacred traditions is inspiring, indeed.

With the blessing of the Almighty God and at the invitation of the Western Diocese, the grace-filled visit of His Beatitude Sahak II, the Armenian Patriarch of Constantinople, is a call to spiritual renewal—an encouragement to remain unwavering in our ancestral Christian faith and to enrich our lives through God-pleasing endeavors.

In our prayers, we beseech the Almighty God to bless and strengthen the Armenian Patriarchate of Constantinople. May God grant a long and healthy life to its Patriarch, preserve the brotherhood, and grant prosperity to the faithful in order that they may further flourish the blessed vineyard of our Church for the glory of our Lord Jesus Christ, the Armenian Church, and our people.

On behalf of the Clergy, the Diocesan Council, and the faithful of the Western Diocese of the Armenian Church of North America, we once again warmly welcome the historic of His Beatitude Sahak II, the Armenian Patriarch of Constantinople.

We are confident that through his gracious presence and prayers, we will continue to strengthen our Christian faith and preserve our religious and spiritual values.

Prayerfully,

Archbishop Hovnan Derderian
Primate, Western Diocese of the Armenian Church of North America
22 June 2025

# ՈՐԴԻԱԿԱՆ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԽՕՍՔ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՍԱՀԱԿ Բ. ՄԱՇԱԼԵԱՆԻ՝ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ԱՄՆ Արեւմտեան Թեմի Թեմական Խորհուրդի անունով մեր որդիական խոնարհումն ու սրտագին բարի գալուստի մաղթանքները կը յղենք Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք՝ Նորին Ամենապատուութիւն Տէր Սահակ Բ. Մաշալեան Սրբազան Պատրիարքին։

Անսասելի ուրախութիւն եւ հոգեւոր խանդավառութիւն է մեզի համար Նորին Ամենապատուութեան ներկայութիւնը մեր Թեմէն ներս։ Այս պատմական այցելութիւնը ոչ միայն կենդանի կապ մը կը վերահաստատէ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան եւ ԱՄՆ Արեւմտեան Թեմի միջեւ, այլ նաեւ կը խորհրդանշէ միասնութեան, շաղախումի եւ նորոգուած առաքելութեան ուղի մը՝ մեր հաւատացեալ զաւակներուն համար։

ԱՄՆ Արեւմտեան Թեմը, իր գոյութեան 100-ամեայ պատմութեան ընթացքին, մեծ խնամքով եւ նախանձախնդրութեամբ իրականացուցած է բազմաթիւ առաքելութիւններ՝ հոգ տանելով իր հաւատաւոր զաւակներուն հոգեւոր կարիքներուն, քարոզելով Տէրունական Աւետարանը, պահպանելով հայրենական ժառանգութիւնը, եւ կերտելով հոգեւոր ամուր համայնքներ՝ Մայր Հայրենիքէն հեռու, օտար ափերու մէջ։

Հաւատացած ենք, որ Նորին Սրբութեան այցելութիւնը պիտի հանդիսանայ ոգեւորիչ, մխիթարական եւ շարժիչ խթան՝ մեր նոր ծրագիրներու, երազանքներու եւ համայնքային նախաձեռնութիւններու յաջող իրականացման ընթացքին։

Կ՚աղօթենք Նորին Ամենապատուութեան կենաց, արեւշատութեան եւ երկարակեցութեան համար՝ հայցելով, որ իր Սրբազան Աջի շնորհառատ օրհնութիւնը բաշխէ ԱՄՆ Արեւմտեան Թեմի հաւատացեալ հօտին։

Որդիական խոնարհութեամբ՝

ԴԵՐԻԿ ՂՈՒԿԱՍԵԱՆ
ԱՄՆ Արեւմտեան Թեմի Թեմական Խորհուրդի Ատենապետ
22 Յունիս 2025

# A FILIAL TRIBUTE ON THE OCCASION OF THE VISIT OF HIS BEATITUDE SAHAK II MASHALIAN, ARMENIAN PATRIARCH OF CONSTANTINOPLE

On behalf of the Diocesan Council of the Western Diocese of the Armenian Church of North America, we extend our filial respect and heartfelt welcome to His Beatitude Sahak II Mashalian, Armenian Patriarch of Constantinople.

The presence of His Beatitude within our Diocese is a profound joy and a source of deep spiritual gratification. This historic visit not only reaffirms the living bond between the Patriarchate of Constantinople and the Western Diocese of the United States, but also stands as a powerful symbol of unity, communion, and a renewed sense of mission for the faithful children of our Church.

Throughout its century-long history, the Western Diocese has faithfully and diligently carried out its sacred mission: tending to the spiritual needs of its flock, proclaiming the Gospel of our Lord, preserving the Armenian heritage, and building spiritually vibrant communities on these foreign shores—far from the Homeland, yet deeply rooted in its legacy.

We are confident that Your Beatitude's visit will serve as an inspiring, consoling, and motivating force as we pursue new programs, realize long-cherished dreams, and bring to life our shared community initiatives.

With prayerful hearts, we beseech the Lord to grant Your Beatitude continued health, long life, and a fruitful ministry. May the grace-filled blessing of Your holy right hand be lovingly extended upon the faithful flock of the Western Diocese.

Filially,

Derik Ghookasian
Chairman, Diocesan Council
Western Diocese of the Armenian Church of North America
22 June, 2025




St. Mary Armenian Apostolic Church of Costa Mesa - renovated 2024
Կոստա Մեսայի Սուրբ Մարիամ Հայ Առաքելական Եկեղեցի – վերանորոգվել է 2024 թվականին




St. Mary Stambolian Family Assembly Hall - Opened 2025
Սուրբ Մարիամ Ստամբոլյան Ընտանեկան Ժողովների Սրահ – բացվել է 2025 թվականին




St. Mary Courtyard, Stambolian Family Assembly Hall and Meghrouni Educational Building - Opened 2024
Սուրբ Մարիամի Բակային տարածքը, Ստամբոլյան Ընտանեկան Ժողովների Սրահը և Մեղրունի Կրթական Շենքը – բացվել են 2024 թվականին




St Mary Armenian Church Costa Mesa cultural complex
Կոստա Մեսայի Սուրբ Մարիամ Հայ Առաքելական Եկեղեցու մշակութային համալիր

## Նորին Ամենապատիվ Սահակ Բ Մաշալյան

Ձերդ Ամենապատվություն,

Կոստա Մեսայի Սուրբ Մարիամ Հայ Առաքելական Եկեղեցու հավատացյալների, օժանդակ մարմինների, Տիկնանց միության, Ծխական խորհրդի և մեր անունից՝ ամենայն ուրախությամբ ողջունում ենք Ձերդ Ամենապատվությանը:

Ձեր այցելության օրերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվելու է միաբանական ժողով, որին մասնակցելու պատճառով բացակայելու ենք Ծխուխից: Սակայն հոգեպես և մեր աղոթքներով շարունակելու ենք Ձեզ հետ և մեր սիրելի համայնքի հետ լինելու այս պատմական այցելության ընթացքում:

Ձերդ Ամենապատվություն,

Ձեր ներկայությունը մեծ օրհնություն է մեր ծխական համայնքի համար: Որպես Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հոգևոր առաջնորդ՝ Ձեր այցը մեզ ավելի է մոտեցնում մեր նախնիների քրիստոնեական հավատքին, մեր սրբազան ժառանգությանը և Հայ Առաքելական Եկեղեցու հարատև առաքելությանը:

Ձեզ հետ աղոթակից լինելով՝ մեր հավատքը պիտի զորանա, և մեկ անգամ ևս կլինի ներշնչման մի մեծ հնարավորություն՝ ապրելու որպես Հայ Առաքելական Եկեղեցու հավատարիմ որդիներ և դուստրեր:

Թեև չենք կարող անձնապես ողջունել Ձեզ, սակայն որդիական խոնարհությամբ փոխանցում ենք մեր սերը և երախտագիտությունը: Թող Աստված առատորեն օրհնի Ձեզ, և Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ պահի և պահպանի՝ պարգևելով երկար տարիների քաջառողջ և արևաշատ օրեր:

Որդիական խոնարհությամբ,
Մատչիմ ի համբույր Ձերդ Ամենապատվության Սուրբ Աջին,

Որդիական սիրով՝
Հոգեշնորհ Երեմիա Վարդապետ Աբգարյան
Հայ Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ
Կոստա Մեսայի Սուրբ Մարիամ Հայ Առաքելական Եկեղեցու Հոգևոր Հովիվ

---

## Welcoming Remarks on the Occasion of the Patriarchal Visit of His Beatitude Sahak II Mashalian

Your Beatitude,

Beloved Brothers and Sisters in Christ,

On behalf of the faithful of Saint Mary Armenian Apostolic Church in Costa Mesa, it is with great reverence and honor to welcome Your Beatitude to our spiritual home. Though I am unable to be present in person due to an important pastoral duty in Armenia, please know that my heart and prayers are with you and our blessed community during this historic visitation.

Your Beatitude, your presence is a profound blessing to our parish. As the spiritual leader of the Armenian Patriarchate of Constantinople, your visit brings us closer to our ancestral Christian Faith, our shared heritage, and the enduring mission of the Armenian Apostolic Church. Your leadership continues the legacy of the Holy Apostles and our martyred saints, guiding us with wisdom, courage, and compassion in these modern times.

We are deeply grateful for your gracious visit to our church as you bestow upon us Christ's peace and blessings.. May your time with us strengthen our faith, deepen our unity, and inspire our youth to live as faithful sons and daughters of the Armenian Apostolic Church.

Your Beatitude,

Though I am unable to greet you in person, I humbly extend my reverence and gratitude. May the Lord bless your ministry abundantly and protect you always under the intercession of the Holy Mother of God.

With love in Christ,

Very Rev. Fr. Yeremia Abgaryan
Vicar General of the Western Diocese of the Armenian Church
Parish Priest of Saint Mary Armenian Apostolic Church of Costa Mesa



# Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցի՝ Քոսթա Մեսա

## Ծխական Խորհուրդի Նախագահի Պատգամը

## Նորին Ամենապատուութիւն Սահակ Բ'ի Հայրապետական Այցելութեան Առիթով

Նորին Ամենապատուութիւն,

Սիրելի՝ հաւատացեալներ,

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անունով մեծ պատիւ է ինձի համար բարի գալուստ մաղթել Ձերդ Ամենապատուութեան մեր ծխական ընտանիքին: Ձեր ներկայութիւնը մեր մէջ՝ պատմական եւ խորապէս հոգեւոր նշանակութիւն ունի, քանի որ կը՛նդհանրացնէ մեր համայնքը Հայ Եկեղեցւոյ կենդանի եւ առաքելական աւանդութեան հետ, զոր դուք կը պատուարէք ու կը պահէք անխախտ նուիրումով:

Այս այցելութիւնը ոչ միայն օրհնութիւն է, այլ նաեւ հոգեւոր վերահաստատում մը մեր ծխական ժողովուրդին համար: Որպէս Կոստանդնուպոլսոյ 85-րդ Պատրիարք՝ Ձեր առաջնորդութիւնը կը յիշեցնէ մեզի այն անխզելի հաւատքի շղթան, որ սկսած է սուրբ առաքեալներէն, մեր նախնիներէն եւ հասած է մեզի: Այս աշխարհին մէջ, որ շատ յաճախ մեզի կը հեռացնէ մեր արմատներէն, Ձեր օրինակը կը հրաւիրէ վերադառնալ էականին՝ Քրիստոսին, Եկեղեցւոյ եւ հայ քրիստոնեայ վկայութեան տոկուն ուժին:

Ս. Աստուածածինին մէջ մենք հպարտ ենք այն սերունդներով, որոնք այս եկեղեցին կառուցած եւ պահած են աղօթքով, ծառայութեամբ եւ զոհողութեամբ: Այսօր, խոնարհութեամբ կը բանանք մեր դռները եւ մեր սիրտերը Ձեր օրհնութիւնը ընդունելու: Թո՛ղ Ձեր այցելութիւնը նորոգէ մեր հաւատքը, ներշնչէ մեր երիտասարդները եւ զօրացնէ մեր միութիւնը՝ իբրեւ Քրիստոսի մէկ մարմին:

Անձնական շեշտումով մը՝ կ՚ փափագիմ արտայայտել իմ խորին յարգանքը եւ շնորհակալութիւնը Ձեր հովուական առաջնորդութեան, եւ այն պատուին համար, որ Ձեր ներկայութեամբ կը բերէք մեր ծուխին : Ասիկա պահ մըն է, որ որ երկար ատեն պիտի պահենք մեր սրտերուն ու հոգիներուն մէջ:

Մատչիմ ի համբոյր Ձերդ Ս..Աջոյն:

Օրհնութեան ակնկալութեամբ՝<br>
Մայքըլ Հոլիս<br>
Ծխական Խորհուրդի Նախագահ<br>
Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցի՝ Քոսթա Մեսա

## St. Mary Armenian Apostolic Church of Costa Mesa

## Message from the Parish Council Chairman:

# On the Occasion of the Patriarchal Visit of His Beatitude Sahak II

Your Beatitude,

Beloved Faithful,

On behalf of the Parish Council of St. Mary Armenian Apostolic Church, it is my great honor to welcome Your Beatitude to our parish. Your presence among us is both historic and deeply meaningful, connecting our local community to the living, apostolic tradition of the Armenian Church that you so faithfully uphold.

This visit is not only a blessing—it is a moment of spiritual affirmation for our parishioners, young and old alike. As the 85th Patriarch of Constantinople, your leadership reminds us of the unbroken line of faith that stretches from the Holy Apostles to our ancestors, and now, to us. In a world that often pulls us away from our roots, your example calls us back to what is essential: Christ, the Church, and the enduring strength of the Armenian Christian witness.

At St. Mary, we are proud of the generations who have built and sustained this parish through prayer, service, and sacrifice. Today, we humbly open our doors and our hearts to receive your blessing. May your visit renew our faith, inspire our youth, and strengthen our unity as one body in Christ.

On a personal note, I extend to you my deepest respect and gratitude for your pastoral leadership and for honoring our parish with your presence. It is a moment we will long cherish.

With heartfelt welcome,
Michael Hollis
Parish Council Chairman
St. Mary Armenian Apostolic Church of Costa Mesa.



150 հոգինոց Միացեալ Երկսեռ Երգչախումբը կը պատարագէ Լոս Անճէլըսի Hollywood Bowl'ի մէջ պատարագիչն էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը ղեկավարութեամբ Բրշ. Ստեփան Կէօզիւմեանի.
Under the conductorship of Deacon Stepan Gozumian, the 150-member Mixed Choir performs the hymns during the Pontifical celebration of the Divine Liturgy at the Hollywood Bowl in Los Angeles. The celebrant was His Holiness Karekin II, Catholicos of All Armenians.



Խաչատուրեան Դ.Դ. Երգչախումբը նկարուած Բարեխնամ Առաջնորդ Յովնան Սրբազանին եւ նախկին Առաջնորդ Վաչէ Սրբազանին հետ
The Khachadourian Choir, pictured with the Diocesan Primate Archbishop Hovnan Derderian and the former Primate Archbishop Vatche Hovsepian



Խաչատուրեան Դ.Դ. Երգչախոբւմբը  աշխարհիկ համերգով կը տօնէ իր տարեդարձը
The Khachadourian Choir celebrates its anniversary with a secular concert.



Խաչատուրեան Դ.Դ. Երգչախումբը նաւով պտոյտ մը իրականացուց Երուսաղեմի Գալիլիոյ Ծովը
ուր երգեցին Հայրենիքի Քայլերքը եւ ջրօրհնէքի շարականները
The Khachadourian Choir took a boat tour on the Sea of Galilee in Jerusalem,
where they sang the national anthem of Armenia and the hymns of the Blessing of Water (Jurorhnek) service

# Նորին Ամենապատուութիւն
# Տ. ՍԱՀԱԿ Բ.
## Պատրիարք Հայոց Կ.Պոլսոյ
## Այցելութեան Առիթով

Ամենապատիւ Պատրիարք Հայր բարի եկած էք Լոս Անճէլըս, բոլորիս համար մեծ երջանկութիւն է Ձեր բարձր ներկայութիւնը վայելել:

Մեր Պոլիսէն հեռացումը տասնեակ տարիներ առաջ տեղի ունեցաւ եւ ցարդ կը վերյիշենք առաջին օրը որ մարմնապէս հեռու մնացինք մեր ծննդավայրէն:

1978 թուականին, օրուայ Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գրշ. Տ. Վաչէ Ս. Արք.Յովսէփեանի արտօնութեամբ, Առաջնորդանիստ Ս. ՅովհաննուԿարապետ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ կազմուեցաւ Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը մասնակցութեամբ Պոլիսէն գաղթած զանազան երգչախոմբի անդամներու եւ ղեկավարութեամբ Անձնուէր Վարիչ Բրշ.Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի:

Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը մի քանի Տարիներ յետոյ, նախ փոխադրուեցաւ Մոնթէպէլլոյի Ս. Սարգիս Հայց. Առաք. Եկեղեցի նախագահ ունենալով Արժ. Ս. Վարդան Ա. Քհնյ. Տիլկէրեանը եւ Արժ. Տ. Նարեկ Ա. Քհնյ. Մատարեանը: Յետոյ փոխադրուեցաւ Արեւմտեան Թեմի նորաօծ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճար նախագահ ունենալով Բարեխնամ Առաջնորդ Յոֆսան Սրբազան Տէրտէրեանը:

Երգչախումբս յետոյ կը միանայ նորակազմ Շնորհալի Երգչախումբին որոնք միասնաբար կը շարունակեն իրենց Աստուածահաճոյ ծառայութիւնը:

Մինչ այդ Ամերիկայ Միացեալ Նահանքներ Լոս Անճէլըս հաստատուելէ յետոյ սկսանք մեր ապագան ստեղծել աշխարհի այս հեռաւոր ափին վրայ:

Սակայն մեր Լոս Անճէլըս կեցութեան իւրաքանչիւր օրուան մէջ երբ խնդրոյ արարկան դարձաւ ազգային ու եկեղեցական կեանքը որ դրոշմուած էր մեր երիտասարդական ու պատենական տարիներուն Պոլսոյ Փառաւոր համայնքին ընդմէջէն:

Տարիներ անցան հեռու Պոլիսէն, սակայն ամէն անգամ որ հիւր մը կ՝ունենանք հիանալի առիթ կը դառնայ վերյիշելու մեր ծննդավայրը եւ անցեալի ինչ ինչ անմոռանալի յուշերը:

Այդ յուշերուն մէջ ամենամեծ պարծանքն է Պոլսոյ Պատրիարքական Աթոռը որուն շուրջ հարիւրաւոր տարիներ համախմբուած են մեր նախորդները եւ եկեղեցական կեանքը:

Պոլսահայերուն, ի մասնաւորի Աստուածահաճոյ ծառայութեան ուղղութեամբ աշխատող պոլսեցիներուն համար, մեծ նշանակութիւն ունի հիւրասիրել կրօնական դասու գահակալները:

Անցեալին Երջանկայիշատակ Շնորհք Գալուստեան, Գարեգին Բ. Գազանճեան եւ Մեսրոպ Բ. Մութաֆեան Պատրիարքները հիւրասիրեցինք իսկ այսօր կ՝ողջունենք Ձեր Հովուուական այցելութիւնը եւ բոլորս Ձեզի Հանդէպ կը յայտնենք մեր անփոփոխ յարգանքը եւ կ՝ըսենք Աստուած Օգնական սիրելի Պատրիարք Հայր, բարի եկաք Լոս Անճէլըս մաղթելով քաջառողջութիւն եւ յաջողութիւն Ձեր Աստուածահաճոյ առաքելութեան մէջ:

Վարչութիւն
Խաչատուրեան Դ.Դ. Երգչախումբի
Լոս Անճէլըս
22 Յունիս 2025

# His Beatitude
# Sahak II
## Armenian Patriarch of Constantinople
## On the occasion of visiting Los Angeles

Most Reverend Patriarch, welcome to Los Angeles. Your presence here fills our hearts with immense happiness. We reminisce about the very day of our departure from “Bolis” many decades ago, when we physically separated from our birthplace.

The Khatchadourian choir was established at St. Hovanou Garabed Cathedral in 1978, under the auspices and chairmanship of His Eminence Archbishop Vatche Hovsepian, former Primate of the Western Diocese. The choir consisted of newly arrived choir members under the dedicated leadership of Deacon Stepan Gozumian. A few years later, the choir transitioned to St. Sarkis Apostolic church in Montebello serving under the chairmanship of parish Archpriest Fr. Vartan Dulgarian and Archpriest Fr. Nareg Matarian. In recent years, the Khatchadourian choir relocated to St. Leon, Ghevontians Cathedral of the Burbank diocese by the invitation and chairmanship of His Eminence Archbishop Hovnan Derderian, Primate of the Western Diocese of North America. Currently the Khatchadourian and the Shnorhali choirs have joined forces and serve together in their God-pleasing combined mission.

After our move to the United States of America, we settled in Los Angeles, and established our future in this remote part of the world. However, we remained mindful and preoccupied, on a daily basis, by issues facing our nation and church, which were ingrained in us during our youthful years while growing up in our glorious “Bolis” community. We have lived away from “Bolis” for many years. Yet, every time we welcome a visitor, we cherish the opportunity to refresh the memories of our unforgettable birthplace. Those memories include our greatest pride, namely our Patriarchate of Constantinople, which has been a hub for our forefathers, who have gathered around the sacred ground for hundreds of years.

There is great significance among “Bolsahyes,” specifically for those who are God-serving members of the community, to welcome their most revered Holy Fathers with utmost hospitality. In the past we welcomed Patriarchs of Blessed Memory; Karekin I Khatchadourian, Shnork Kalustian, Karekin II Kazanjian, and Mesrob II Moutafian.

Today, we greet You during Your Pastoral visit and all of us express our unwavering respect by declaring:

“Asvads Oknagan Badriark Hayr”.

Welcome to Los Angeles.

We wish you good health and success in your Divine Mission.

Khatchadourian Choir Committee
Los Angeles
22 June, 2025



Մեսրոպ Բ Պատրիարք, ընկերակցութեամբ Սահակ Հայր Սուրբի հիւրասիրուած է
Լոս Անճէլըսի Պոլսահայ Միութեան մէջ
His Beatitude Mesrob II, accompanied by Rev. Fr. Sahak was
hosted by the Organization Of Istanbul Armenians, Los Angeles



Պոլսոյ Պատրիարքութենէ Արամ Արքեպիսկոպոս եւ Սահակ Եպիսկոպոս, կը հիւրընկալուին Պոլսահայ Միութեան կողմէ
Archbishop Aram and Bishop Sahak of the Patriarchate of Constantinople are hosted by OIA.



Լոս Անճէլըսի Պոլսահայ Միութեան նորակառոյց շէնքը
The newly built buiding of The Organization of Istanbul Armenians in Los Angeles




Հրանդ Տինք դասախօսութեան դահլիճ
Hrant Dink Lecture Hall




Գրիգոր Եւ Աւետ Գիւրքճիւօղլու զանազան միջոցառումներու սրահ
Krikor and Aved kurkcuoglu hall




Պոլսահայ Միութեան նորակառոյց շէնքի բացման օր
Opening day of The newlybuilt building of The Organization Of Istanbul Armenians



Ամենահայոց Կաթողիկոս Գարեգին Բ, Բարեխնամ Առաջնորդներ Յովնան Սրբ. Տէրտէրեան եւ Խաժակ Սրբ. Պարսամեան նկարուած Պոլսահայ Միութեան բարերարուհի ողբացեալ Տկն. Սօնա Գիւրքճիօղլուի հետ

His Holiness Karekin II, Catholicos of All Armenians; His Eminence Archbishop Hovnan Derderian, Primate of the Western Diocese of the Armenian Church; and Archbishop Khajag Barsamian, Primate of the Eastern Diocese of the Armenian Church, pictured with benefactor Mrs. Sona Kurkcuoglu.



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Կաթողիկոսի Պատգամը Պոլսահայ Միութեան նորակառոյց շէնքին մէջ

The Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians,
delivered at the newlybuilt building of the Organization Of Istanbul Armenians



Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Նկարուած համայն աշխարհի Թեմակալ Առաջնորդներու
եւ Պոլսահայ Միութեան անդամներու հետ

Catholicos of all Armenians Karekin II pictured with Primates from around the world
and the members of Organization Of Istanbul Armenians

# Ն.Ա.Տ. ՍԱՀԱԿ Բ. ՊԱՏՐԻԱՐՔ
## Հայոց Կ.Պոլսոյ
## Լոս Անճէլըսի Պոլսահայ Միութիւն Այցելութեան Առիթով

Ամենապատիւ Պոլսահայոց Պատրիարք Սահակ Բ. Սրբազան Հայր, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Յովնան Սրբազան Հայր, Պոլսոյ Պատրիարքական Աթոռի Միաբան Հոգշ. Տ. Յարութիւն Վարդապետ Տամատեան, Արժանապատիւ Տէր Հայրեր եւ յարգելի հիւրեր բարի եկած էք:

Սիրելի Պատրիարք Հայր այսօր այս սրասհին մէջ հաւաքուած Լոսանճէլըսաբնակ պոլսահայերս ունինք այն ուրախութիւնը, որ մեր մէջ կը հիւրասիրենք Ձերդ Ամենապատուութիւնը եւ բոլորս մեր յարգանքի տուրքը կը մատուցանենք Պատրիարքական Աթոռոյ, նոյնպէս նաեւ Ձեր անձին նկատմամբ, միութեանս երդիկին ներքեւ զոր կը կոչենք մեր բոլորին տաքուկ տունը: Պոլիսէն հեռու մնացածներուս համար մխիթարական երեւոյթ է, թէ Ձեր առաջնորդութեան ներքեւ Պատրիարքական աթոռը այսօր եւս կը ջանայ յառաջ տանիլ իր պատմական առաքելութիւնը ժողովուրդին վերելքին համար:

Միութեանս Հոգաբարձութեան, Գործադիր Մարմինի եւ բոլոր ենթայանձնախումբերու անունով կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները որ ընդառաջելով մեր հրաւէրին տրամադրեցիք Ձեր թանկաքին ժամերը:

Այս առիթով կ՝ուզեմ յայտնել մեր անկեղծ երախտագիտութիւնը մեր շատ սիրելի Առաջնորդ Յովնան Սրբազան Հօր որ միշտ հայրական հոգածութիւն կը ցուցաբերէ եւ իր քաջալերանքի խօսքերով զօրաւիգ կը կանգնի միութեանս ազգօգուտ գործունէութիւններուն: Ինչպէս նաեւ Միութեանս անունով կ՝ուզեմ շնորհաւորել Իր Քահանայական Ձեռնադրութեան 45 րդ. տարեդարձը:

Միութիւնս տարիներու ընթացքին հիւրասիրած է Պոլիսէն ժամանած բազմաթիւ կղերականներ անոնցմէ վերջինը եղաւ Պատրիարքական Աթոռի Միաբան Հոգշ. Տ. Յարութիւն Վարդապետ Տամատեան, որ իր համեստ կեցուածքով եւ մարդամօտ անձնաւորութեամբ գրաւած էր մեր բոլորին սիրտերը: Հայր Սուրբին տարած Աստուածահաճոյ ծառայութիւնն ու առաքելութիւնը բարձր գնահատուած է ինչպէս Պոլսոյ նոյնպէս Լոս Անճէլըսի Պոլսահայ համայնքին կողմէ:

Սիրելի Պատրիարք Հայր , պոլսահայերս հակառակ որ, հեռաւոր ԱՄՆ-ի մէջ մեր ապագան հաստատած ենք սակայն միշտ հաւատարիմ մնացած ենք մեր անցեալին: Այս իմաստով սկսելով մեր շատ սիրելի Շնորհք Պատրիարքէն մինչեւ Մեսրոպ Բ. Պատրիարք, ուշադրութեամբ կը հետեւած ենք Պոլսոյ եկեղեցական ու ազգային կեանքին: Այս բոլորին մէջ մեր ուշադրութեան կեդրոնացումը անշուշտ, թէ միշտ եղած է Պատրիարքական Աթոռն ու իր գործունէութիւնը: Հետեւաբար, պէտք է ըսել, որ տարիներ յետոյ եւս տակաւին ծանօթներն ենք Պոլսահայ համայնքին եւ ազգային կեանքին: Ձեր ներկայութեան կ՝ուզեմ շնորհակալութիւն յայտնել եւ յաջողութիւն մաղթել ազգային հաստատութիւններու նորընտիր վարչականներուն ինչպէս նաեւ հայ մամուլին, հեռուստատեսիլին, միութիւններուն , երգչախումբերուն եւ պարախումբերոն իրենց ցուցաբերած եւ իրականացուցած ազգօգուտ ու Ատսուածահաճոյ ծառայութիւններուն համար:

Գիտենք թէ դուք որքան մտերիմ հետաքրքրութիւն եւ հոգատարութիւն կը ցուցաբերէք բոլոր երախաներուն, ի մասնաւորի Գրնալը Կղզիի Կազդուրման Կայանի մէջ միահաւաքուած երախաներուն կողմէ կազմակերպուած ձեռնարկները ուրախութեան աղբիւր կըլլայ մեր բոլորին:

Կը բաժնենք նաեւ Պոլսոյ Հայ համայնքի ուրախութիւնը որ պատմական օր մը ապրեցաւ 26 Ապրիլ 2025 թուականին Ձեր գլխաւորութեամբ իրականացնելով օծումն ու վերաբացումը մեր սիրելի Պէյօղլու պատմական Էսաեան Վարժարանի կից Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ:

Այս առթիւ կ՝ուզենք շնորհաւորել մեր շատ սիրելի Յարութիւն Տամատեան Հայր Սուրբը իր կուսակրօն Քահանայ ըլլալու 10 րդ տարեդարձը:

Սիրելի Պատրիարք Հայր կ՝ուզեմ ամփոփ ակնարկ մը նետել Լոս Անճէլըսի Պոլսահայ Միութեանս պատմութեան մասին:

1976 թուականի Սեպտեմբեր ամսուան մէջ Կիրակի օր մը, Պոլիսէն գաղթած 36 հոգիներէ բաղկացած խումբ մը հայրենասէր երիտասարդներ հանդիպում մը ունեցան Արեւմտեան Լոս Անճէլըսի Ս.Սարգիս Հայց. Առաք. Եկեղեցւոյ Մամուլեան սրահին մէջ եւ հիմը դրին Պոլսահայ Միութեան: Այս հանգրուանին միութեանս գլխաւոր նպատակն էր նեցուկ կանգնիլ եւ օգնել կարիքաւոր հայ աշակերտներուն որոնք գաղթած էին Պոլիսէն:

Միութիւնս արագօրէն սկսաւ աճիլ եւ ընդլայնիլ նոր երիտասարդներով, որով արագօրէն կազմուեցաւ մարզական եւ երիտասարդաց յանձնախումբերը եւ յետոյ կրթաթոշակի յանձնախումը, աւելի օգտակար հանդիսանալու համար նախակրդարանի եւ լիկէոնի աշակերտներու ինչպէս նաեւ յաջող համալսարականներու:

Միութիւնս նախքան այս ներկայ շէնքը ծախու առնելու շարունակեց իր առաքելութիւնը իբրեւ վարձակալ տարբեր շէնքերու մէջ եւ շարունակելով իր ազօգուտ աշխատանքը եւ կազմակերպելով անթիւ մշակութային ձեռնարկներ ուշագրաւ ձեւով սկսաւ ճանչցուիլ Լոս Անճէլըսի հայ համայնքին կողմէ:

Ունինք նաեւ Մշակութային, Տիկնանց Յանձնախումբերը ասոնց կողքին կազմուեցան Էսաեան, Կեդրոնական, Մխիթարեան Յանձնախումբերը որոնց սաները կը կազմակերպեն Բաժակի օրերու խրախճանքներ վերյիշելու համար իրենց սիրելի դպրոցները, ուսուցիչ ու ուսուցչուհիները եւ փոխանցելու իրենց ինչ ինչ յուշերը:

Ի վերջոյ 2001 թուականին միութեանս ներկայ վարչութիւնը ծախու առաւ այս շէնքը: Բոլորս ուրախ էինք եւ յուզուած քանի որ տիրացած էինք մեր նպատակին եւ տէրն էինք շէնքի մը:

Մի քանի տարիներ յետոյ որոշուեցաւ շէնքը փլել եւ պոլսահայերուն վայել նոր շէնքի մը տիրանալ:

Յունիս 2005 թուականին իրականացուցինք հիմնարկէքի արարողութիւնը բարձր ներկայութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հօր, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գրչ. Տ. Յովնան Սրբ. Արք. Տէրտէրեանի, հոգեւորականաց դասու, քաղաքական եւ կրթական ղեկավարներու, ինչպէս նաեւ միութեանս բարերարներու, անդամներու եւ բարեկամներու: Կարծես այդ օրը բոլորիս համար տօնական օր մըն էր:

Շինարարութիւնը 5 տարի տեւեց եւ միութեան վարչութիւնը այդ 5 տարիներու ընթացքին իր ժողովները գումարեց Ս. Պետրոս Եկեղեցւոյ խնամակալութեան կողմէ ցրի ըլլալով տրամադրուած եկեղեցւոյ խորանին տակ գտնուող փոքր սենեակին մէջ: Այս առթիւ միութեանս անունով շնորհակալութիւն կ՝ուզեմ յայտնել մեր շատ սիրելի Արժ. Տ. Շնորհք Աւագ Քհնյ. Տէմիրճեանին եւ եկեղեցւոյ վարչութեան:

Անշուշտ թէ շինարարութիւնը իր աւարտին բերելու համար պէտք ունէինք նիւթական օժանդակութեան: Կրնամ խօստովանիլ որ երբ կը դիմէինք մեր սիրելի իւրաքանչիւր անդամին չմերժուեցանք եւ ստացանք հսկայական գումարներ որոնց միջոցաւ կարողացանք մեր սիրելի շէնքը իր աւարտին հասցնել: Ձեր ներկայութեան, սիրելի Պատրիարք Հայր, կ՝ուզեմ բոլորին անխտիր յայտնել մեր սրտաբուխ երախտագիտութիւնը:

Մեր նոր շէնքին բացումը տեղի ունեցաւ 2 Հոկտեմբեր 2010 թուականին դարձեալ բարձր ներկայութեամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Վեհափառ Հօր, Բարեխնամ Առաջնորդ Յովնան Սրբազան Հօր, ինչպէ նաեւ համայն աշխարհի Թեմակալ Առաջնորդներու, Թեմիս Առաջնորդարանի Հոգեւորականց Դասու եւ խուռներամ բազմութեան:

Կ՝արժեր տեսնել Պոլսահայերուս ուրախութիւնը որոնք իրար կը շնորհաւորէին այպիսի հոյակապ եւ գեղեցիկ շէնքի մը տիրացած ըլլալնուս համար:

Իբրեւ Հայ Կեդրոն, Պոլսահայ Միութիւնս իր դռները բաց կը պահէ ոչ թէ միայն պոլսահայերուն այլ բոլոր հայ ժողովուրդին համար, ի մասնաւորի հայ երախաներուն ու երիտասարդներուն անխտիր:

Բոլորիս համար մեծ պատիւ ու բախտաւորութիւն էր, թէ շէնքի հիմնարկէքի արարողութեան եւ թէ բացման, վայելել Գարեգին Վեհափառ Հօր եւ Առաջնորդ Սրբազան հօր ներկայութիւնները:

Պատրիարք Հայր ինչպէս գիտէք հայը ուր որ ալ գաղթած է առաջնահերթութիւն սեպած է եկեղեցիի մը կամ միութեան մը հիմնումը, որու հովանիին ներքեւ ան զինքը աւելի հարազատ ու ապահով զգացած է:

Ինչպէս նոր շէնքի շինարարութենէ առաջ, բացումէն յետոյ ալ միութիւնս ունեցած է անթիւ մշակութային եւ այլ ձեռնարկներ եւ վստահ ենք որ նորընտիր երիտասարդ վարչականներու ու յանձնախումբերու աշխատութեամբ ալ աւելի պիտի ունենանք ազգօգուտ աշխատութիւններ:

Պատրիարք Հայր բարի կեցութիւն կը մաղթենք Ձեզի եւ բարի վերադարձ դէպի Ձեր Հօտը, կը խնդրենք Ձեզմէ, Ձեզ հետ տարէք պոլսահայերուս ամենասրտագին ողջոյններն ու բարեմաղթանքները Պոլսոյ եղբայր ու քոյրերուն: Ընդունեցէք նաեւ մեր բոլորին քաջառողջութեան եւ յաջողութեան բարեմաղթանքները Ձեր առաքելութեան եւ ապագայ ծրագիրներուն մէջ:

Շնորհակալութիւն:

Վարչութիւն Պոլսահայ Միութեան
Լոս Անճէլըս, Յունիս 18, 2025

# His Beatitude Sahak II, Armenian Patriarch Of Constantinople

## On The Occasion Of Visiting Organization Of Istanbul Armenians Los Angeles

Your Beatitude Sahak II, Armenian Patriarch of Constantinople; Your Eminence Archbishop Hovnan Derderian, Primate of the Western Diocese of the Armenian Church of North America; Very Reverend Father Harutyun Damadyan, member of the Brotherhood of the Patriarchal See of Constantinople; Reverend Fathers and esteemed guests, welcome.

Dear Patriarch Father, today we, the Armenians of Los Angeles who hail from Constantinople, are gathered in this hall with great joy, as we have the honor of hosting Your Beatitude among us and of offering our deepest respects to the Patriarchal See and to you personally, in this heartwarming venue which we consider as our "home."

For those of us who have lived far from Constantinople, it is a comforting sight that, under your leadership, the Patriarchal See continues to strive to fulfill its historic mission for the upliftment of our people.

On behalf of the Board of Trustees, the Executive Committee, and all subcommittees of our Organization, we express our heartfelt gratitude to you for kindly accepting our invitation and gracing us with your presence.

On this occasion, I would also like to express our sincere appreciation to our beloved Archbishop Hovnan Derderian, whose pastoral guidance, care, encouragement and support are indeed inspirational. On behalf of the Organization Of Istanbul Armenians, I would like to congratulate His Eminence on the momentous occasion of his 45th anniversary of consecration into the Priesthood.

Over the years, the Organization of Istanbul Armenians has hosted many clergy from Constantinople. The most recent among them was Reverend Father Harutyun Vardapet Damadyan, a member of the Brotherhood of the Patriarchal See, who captivated our hearts with his humility and graciousness. His God-pleasing service and mission have been highly valued both in Constantinople and by the Armenian community of Los Angeles.

Dear Patriarch Father, although we, the Armenians from Constantinople have established our future here in the distant United States, we have always remained loyal to our past. From our dearly beloved Patriarch Shnork to Patriarch Mesrob II, we have keenly followed the ecclesiastical and national life in Constantinople. Furthermore, the Patriarchal See and its activities have been at the center of our attention. Hence, even after many years, we are familiar with the Armenian community of Constantinople and its national life.

In your presence, I would like to extend our gratitude and wish success to the newly elected leaders of our national institutions, as well as to the Armenian press, television, organizations, choirs, and dance groups for their commendable and God-pleasing services.

We know how much love and care you render for all children, especially for those gathered at the camp on Kınalı Island. Their activities bring great joy to all of us.

We also share the joy of the Armenian community of Constantinople, which on April 26, 2025, witnessed a historic day as our beloved Soorp Harutyun Church, adjacent to the historic Esayan School in Beyoğlu, under your leadership.

On this occasion, we would also like to congratulate our very dear Father Harutyun Damadyan on the 10th anniversary of his ordination as a celibate priest.

Dear Patriarch Father, I would like to give a brief overview of the history of our Los Angeles-based Organization of Istanbul Armenians:

On a Sunday, in September 1976, a group of 36 patriotic young people who had emigrated from Constantinople, gathered at the Mamouelian Hall of St. Sarkis Armenian Apostolic Church in Western Los Angeles and laid the foundation of the Organization of Istanbul Armenians. At that time, the main goal of the Organization was to support and assist Armenian students in need who had emigrated from Constantinople.

The Organization rapidly grew in number as new young members joined. Soon, sports and youth committees were formed, followed by a scholarship committee to provide financial assistance to students from elementary to high school, as well as to promising university students.

Before the acquisition of our current building, the Organization continued its mission in rented facilities, organizing countless cultural events and gradually becoming notable within the Armenian community of Los Angeles.

We also have Cultural and Women's Committees. Alongside these, the Esayan, Central, and Mkhitarian Committees were formed, whose members organize "Bazhaki Or" banquets to reminisce about their beloved schools, teachers, and to share their memories.

Finally, in 2001, our current board purchased this building. It was an thrilling and at the same time, an emotional experience as we had achieved our goal of owning a building.

A few years later, it was decided to demolish the old building and build a new one worthy of Armenians from Constantinople.

In June 2005, we held the groundbreaking ceremony with the distinguished presence of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, our Primate Archbishop Hovnan Derderian, clergy, political and educational leaders, benefactors, members, and friends of our Organization. Indeed, that day felt like a celebration for all of us.

The construction was completed in five years, and during that time, the Organziation's board held its meetings in a small room at St. Peter Armenian Church of Van Nuys, kindly provided by the church's parish council. On this occasion, on behalf of the Organization, I would like to thank

Archpriest Father Shnork Demirdjian and the parish council.

Of course, bringing the construction project to completion, required financial support. I can sincerely say that whenever we approached our beloved members, we were never turned away. We received generous donations through which we were able to complete this wonderful building. In your presence, dear Patriarch Father, I wish to express our heartfelt gratitude to everyone, without exception.

The official opening of our new building took place on October 2, 2010, again with the distinguished presence of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, Archbishop Hovnan Derderian, diocesan primates from around the world, our Diocesan clergy, and a multitudinous crowd.

It was worth seeing the joy of Armenians from Constantinople who embraced each other for the astonishing feat of acquiring such a magnificent and beautiful building.

As an Armenian Center, our Organization keeps its doors open not only to Armenians from Constantinople but to all Armenians, especially to Armenian children and youth, without exception.

It was a great honor and privilege for all of us to welcome the presence of the Catholicos of All Armenians His Holiness Karekin II and Archbishop Hovnan Derderian at both the groundbreaking and the opening ceremonies of our building.

Dear Patriarch Father, as you know, wherever Armenians have emigrated, their top priority has been to establish a church or a union under whose umbrella they would feel more at home and safeguarded.

As before the construction of our new building, and after its opening, our Organization has organized countless cultural and other events, and we are confident that with the efforts of the newly elected young board members and committees, we will continue to have even more nation-benefiting activities.

Patriarch Father, we wish you a blessed stay and a safe return to your flock. We kindly ask you to take with you the heartfelt greetings and best wishes of all Armenians from Constantinople to our brothers and sisters in Istanbul.

Please also accept our collective wishes for your good health and continued success in your mission and future endeavors.

Thank you.

The Board of the Organization of Istanbul Armenians
Los Angeles, June 18, 2025



Գահակալութեան արարողութիւն
The enthronement of His Beatitude Sahak II



Կոլոտ Պատրիարքի ուխտի աղօթք
A prayer near the Late Patriarch Hovhannes Golod’s grave before the enthronement



Շիշլիի Հայոց Գերեզմանատուն ուխտի այց
A prayer at the Armenian Cemetery of Sisli before the enthronement



Գահակալութեան արարողութեան առթիւ հոգեհանգիստ Մեսրոպ Բ. Պատրիարքի շիրմին մօտ
A memorial service near by the tomb of the late Patriarch Mesrob II on the occasion of the enthronement ceremony



Գահակալութեան արարողութիւն
The enthronement of His Beatitude Sahak II



Գահակալութեան արարողութիւն
The enthronement of His Beatitude Sahak II



Գահակալութեան արարողութիւն
The enthronement of His Beatitude Sahak II



Պատրիարքական անդանիկ Ս. Պատարագ Մայր Եկեղեցւոյ մէջ
The first Patriarchal Divine Liturgy of His Beatitude Sahak II at the Patriarchal Cathedral



Պատրիարքական անդրանիկ Ս. Պատարագ Մայր Եկեղեցւոյ մէջ
The first Patriarchal Divine Liturgy of His Beatitude Sahak II at the Patriarchal Cathedral



Պատրիարքական անդրանիկ Ս. Պատարագ Մայր Եկեղեցւոյ մէջ
The first Patriarchal Divine Liturgy of His Beatitude Sahak II at the Patriarchal Cathedral



Գահակալութեան արարողութիւն
The enthronement of His Beatitude Sahak II



Գահակալութեան արարողութիւն
The enthronement of His Beatitude Sahak II



Սահակ Բ. Պատրիարք իր տիրամօրը եւ տիրահօրը հետ
His Beatitude Sahak II with his mother and father



Վեհափառ Հայրապետն ու Սահակ Բ. Պատրիարքը Վեհարանի մէջ
His Holiness Karekin II and His Beatitude Sahak II greet each other



Ս. Էջմիածնի մէջ Հայրապետական Ս. Պատարագ
Pontifical Divine Liturgy in Etchmiadzin Cathedral



Վեհափառ Հայրապետն ու Սահակ Բ. Պատրիարքը Վեհարանի մէջ
His Holiness and His Beatitude at the residence of the Catholicos



Աղօթք Ս. Էջմիածնի մէջ
Prayer at the Holy Etchmiadzin Cathedral



Վեհափառ Հայրապետի հետ
With His Holiness Karekin II



Միւռոնօրհնէքի արարողութիւն
The blessing ceremony of the Holy Myron



Ֆրանսիս Քահանայապետի հետ Վատիկանի մէջ
Meeting with the late Pope Francis at Vatican



Յունաց Պարթողոմէոս Ծայրագոյն Պատրիարքին հետ
Meeting with His Holiness Ecumenical Patriarch Bartholomew



Ասորւոց Մորան Մոր Իգնատիոս Էֆրէմ Բ Պատրիարքին հետ
Meeting with His Holiness Ignatius Ephrem II the Patriarch of the Syriac Orthodox Church



Քոյր եկեղեցեաց առաջնորդներ Կարտինալ Քուրթ Քոխի հետ
The sister church leaders with Cardinal Kurt Koch in Istanbul




Ս. Երուսաղէմի այցելութեան առթիւ թափոր
Procession on the occasion of the visit to the Holy Jerusalem



Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանքի մէջ
At the St. James Armenian Cathedral of the Holy Jerusalem



Ուխտի աղօթք Ս. Յարութեան Տաճարի մէջ
Prayer at the St. James Armenian Cathedral



Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանին մէջ
Patriarchal Divine Liturgy at the Tomb of Christ



Երուսաղէմի Նուրհան Պատրիարք եւ Պոլսոյ Սահակ Բ Պատրիարք միատեղ
His Beatitude Nurhan of Jerusalem and His Beatitude Sahak II greet each other



Սահակ Եպիսկոպոս կը պատարագէ Ս. Ղեւոնդեանց Տաճարին մէջ
Bishop Sahak celebrates Divine Liturgy at the St. Leon Armenian Cathedral



Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ
Divine Liturgy at the Holy Cross Armenian Cathedral of Akhtamar Island



Կեսարիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ պաշտամունքի վերաբացումը
The consecration of the St. Gregory the Illuminator Armenian Church of Kayseri



Տիգրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցւոյ պաշտամունքի վերաբացումը
The consecration of St. Kirakos Armenian Church of Diyarbakir



Տիգրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցւոյ վերաբացման առթիւ
On the occasion of the consecration of St. Kirakos Armenian Church



Տէրիքի Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ
Divine Liturgy at St. George Armenian Church of Derik



Մալաթիոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ
Divine Liturgy at the Holy Trinity Armenian Church of Malatya



Մուսա Լերան Ս. Աստուածածին Եկեղեցւոյ տօնախմբութիւնը
Annual Celebration of the Holy Mother of God Armenian Church of Vakifli



Մուսա Լերան աւանդական դիմաւորումը
The traditional welcoming of Musa Ler, Vakiflikoy village



Մուսա Լերան աւանդական տօնախմբութիւնը
The traditional celebration of Musa Ler



Մուսա Լերան Ս. Աստուածածին Եկեղեցւոյ վերաբացումը
The consecration of the Holy Mother of God Armenian Church of Vakifli



Շնորհք Վարդապետի գաւազանի տուուչութեան արարողութիւնը
Shnork Vartabed was ordained as Archimandrite by His Beatitude Sahak II



Ծաղկազարդի արարողութիւն Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ
The traditional Palm Sunday service at St. George Armenian Church of Samatia



Ամանորեան Համերգ Սամաթիոյ մէջ
New Year's Concert at Samatia



Լուսաւորիչ Դպրաց Դասու 95-ամեակի հանդիսաւոր արարողութիւնը
The ceremony of the 95th anniversary of Lusavoric Choir



Տքր. Հրայր Ճէպէճեանի գիրքի շնորհանդէսը Պէյօղլուի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ։
Dr. Hrayr Jebejian's book presentation at Beyoglu Holy Trinity Armenian Church



Արամեան Ունճեան Վարժարանի նոր շէնքի բացումը
The opening ceremony of the new complex of Aramian Unjian Armenian School



Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի մէջ բացում
The opening ceremony at Surp Prgich Armenian Hospital



Միջեկեղեցական Աղօթք Պէյօղլուի մէջ
Ecumenical Prayer at Beyoglu



ԱՄՆ-ի սարկաւագաց դասէն Կարէն Սարկաւագ, Ամեն. Տ. Սահակ Բ. Պատրիարքի
եւ Կղզեաց Տեսուչ Տ. Յարութիւն Վարդապետի հետ Գնալը Կղզիին մէջ
Deacon Garen Hamamdjian from the Western Diocese is received by His Beatitude Sahak II
and Very. Rev. Fr. Harutyun, the Dean of the Prince Island



Ներսէսեան Դպրաց Դասու տարեդարձին առթիւ
On the occasion of the anniversary of Nersesian Choir




Նաւասարդեան Խաղերու առթիւ պատգամ
The Message on the Navasardian Games opening ceremony




Նաւասարդեան Խաղերու առթիւ Մարալ Պարախումբի հետ
With the Maral Dance Ensemble on the occasion of the Navasartian Games



Համահայկական խաղերու մասնակից խումբի անդամներու հետ
With members of the Pan-Armenian Games participating team from Istanbul




Թամարի Ճակատագիրը հանդիսութեան առթիւ ԱՔՄ-ի մէջ
Destiny of Tamar, Armenian musical event at AKM Cultural Centre



Մաժակ Թօշիկեանի երաժշտական վաստակի 60-ամեակը կը նշուի
60th anniversary of Majak Toshikian's musical life



Լուսաւորիչ Մանկանց Երգչախումբի համերգի աւարտին
On the concert of the Lusavorich Children's Choir



Ս. Յարութիւն Եկեղեցւոյ օծման արարողութիւն
The consecration ceremony of the Holy Resurrection Armenian Church



Ս. Յարութիւն Եկեղեցւոյ օծման արարողութիւն
The consecration ceremony of the Holy Resurrection Armenian Church



Թաքսիմի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ օծման արարութեան աւարտին վարիչներու, սարկաւագաց եւ դպրաց հետ
At the end of the consecration ceremony of the Holy Resurrection Armenian Church of Taksim



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի, Ղալաթիա
Surp Krikor Losavorich Church, Galata



Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր Եկեղեցի, Գումգաբը
Surp Asdvadzadzin (Holy Mother of God) Cathedral, Kumkapi



Ս. Գէորգ Եկեղեցի, Սամաթիա
Surp Kevork Church, Samatya



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի, Գնալը Կղզի
Surp Krikor Losavorich Church, Kinali Island

# COMMITTEE MEMBERS



## Western Diocse of  Armenian Church

*Sitting from left to right:* Lucy Tashjian, Fr. Shnork Demirjian, His Eminence Archbishop Hovnan Derderian, Saro Marukian, Eileen Keusseyan

*Standing left to right:* Derik Ghookasian, Mirican Guregian, Herman Celik, Hratch Setian, Simon Acilacoglu

*Not pictured:* Fr. Khajag Shahbazyan, Dn. Stepan Gozumian



## St. Mary Armenian Church, Costa Mesa

*Left to right:* Ara Karakesisoglu, Tony Markarian, Nazeli Seheryildizi, Very Rev. Fr. Yeremia Abgaryan, Kris Mirzayan, Cano Babek, Puzant Zorayan

# His Beatitude Sahak II Mashalian
# Armenian Patriarch Of Constantinople
# Inaugural Visit To The Western Diocese

## GRAND BANIFACTORS

Mr. & Mrs. Saro & Manush Marukian
Mr. & Mrs. Garabet & Mariam† Akpulat
Mr. & Mrs. Bedros & Anna Oruncakciel

## ST. MESROP MASHDOTS

Khachadourian Choir Of Western Diocese
St. Vincent Jewelery Center
Mr. & Mrs. Derik & Adrineh Ghookasian
Mr. & Mrs. Garo & Agavni Kurian
Mrs. Virginia Zorayan

## ST. NERSES SHNORHALI

Mr. & Mrs. Mardo & Seyda Ayvazyan
Mrs. Esther Berberian
Mr. & Mrs. Charly & Julie Ghailian
Mr. & Mrs. Ara & Anita Karakesis
Mrs.Tamara Nizamian
Mr. & Mrs. Osep & Rita Tokat
Sahnazoglu Family
Mr. & Mrs. Sinan & Anjel Sinanian
Mrs. Armaveni Urun
Mr. & Mrs. Alex & Arda Yemenidjian

## ST. GRIKOR NAREGATSI

Mr. & Mrs. Simon & Hilda Acilacoglu
Mrs. Etil Anan
Mr. & Mrs. Arsavir & Silva Andonian
Fancy Jewelry
Mr. & Mrs. Yetvart & Silva Hecatoryan
Mr. & Mrs. Nurhan & Talar Karatas
Mr. & Mrs. Ara & Houry Kurkciyan
Mr. & Mrs. Tony & Ruth Markarian
Mr. & Mrs. Hayk & Sylvia Minassian
Mr. & Mrs. Kris & Pamela Mirzayan
Mr. & Mrs. Aron & Diruhi Petrosian
Mr. & Mrs. Kevork & Nazeli Dephne Seheryildizi
Mr. & Mrs. Hratch & Lydia Setian
Mr. & Mrs. Sarkis & Alice Setian
Mr. & Mrs. Hacik & Alin Urun
Faithful friend from St. Mary Ch. C. Mesa
Wholesale Jewrelry Exchange

## GOMIDAS VARTABED

Mr. & Mrs. Armen & Nadya Asik
Mr. Haroutioun Balian
Mr. & Mrs. Harutin & Veronika Boyaci
Mr. & Mrs. Dickran & Arlet Kurian
Mr. & Mrs. Mado & Talin Maraciyan
Mr. Rupen Soghomonian
Dermovsesian Electrical Service



**Western Diocese of the Armenian Church of North America**
3325 N. Glenoaks Blvd. Burbank, CA 91504
Tel: (818) 558-7474 Fax: (818) 558-6333
E-mail: Secretary@wdacna.com
facebook.com/westerndiocese
**www.wdacna.com**
Printed by diocesan press 2025